ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«29» հոկտեմբերի 2021 թվականի N 292-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ

Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2021թ. հոկտեմբերի թիվ 292-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բովանդակություն

Ներածական մաս 3 - 4 էջեր

Ամփոփագիր 4 - 5 էջեր

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները 5 – 8 էջեր

Անհամապատասխանությունների
վերաբերյալ գրառումներ 8 - 10 էջեր

Արձանագրված այլ փաստեր 10 -15 էջեր

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ 225-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն:
Հաշվեքննության առարկան	2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշներ	ՀՀ կառավարության 30.12.20202թ. «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 31-ը :
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Դավիթ Չիբուխչյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Ազգային անվտանգություն» ծրագրով ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2021 թվականի վեց ամիսների ֆինանսավորումը կազմել է ճշտված պլանի 83.6 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է 14,243,656.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.0 %-ը: Ծրագրի միջոցառումների համար նախատեսվել են արդյունքի (կատարողական) ութ չափորոշիչներ՝ ձեռք բերվող դեղերի անվանատեսակ, քանակ, համակարգչային սարքավորումների քանակ, գրասենյակային գույքի միավոր քանակ և ծառայության ժամկետ, այլ սարքավորումների քանակ, նախագծահետազոտական փաստաթղթերի թիվ, կառուցվող շենքերի ընդհանուր մակերես, տրանսպորտային սարքավորումների քանակ: Ծրագրի միջոցառումները յոթն են:

Հաշվեքննության արդյունքում արձանագրվել է.

- ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում հանդերձանքի գնման համար 2021 թվականի փետրվարի 5-ին կնքել է պայմանագրեր երեք մատակարար կազմակերպությունների հետ: 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ երկու կազմակերպությունները ամբողջությամբ մատակարարել են պայմանագրով նախատեսված հանդերձանքը, իսկ «Մանանկ» ՍՊԸ կողմից այդ ժամանակահատվածում մատակարարվել է 14,015.3 հազ. դրամի հանդերձանք, կամ նախատեսվածից 17,973.9 հազ. դրամով պակաս: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա է հաշվարկել պայմանագրով սահմանված ուշացված օրերի տույժ:
- ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը գնման ընթացակարգի արդյունքում հանդերձանքի գնման համար 2021 թվականի ապրիլի 2-ին կնքել է

պայմանագրեր 14 մատակարար կազմակերպությունների հետ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ հետ կնքված 27,979.7 հազ. դրամի պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 25,939.7 հազ. դրամի տարբեր տեսակի հանդերձանք, սակայն ընկերության կողմից մատակարարվել է 12,032.0 հազ. դրամի հանդերձանք, կամ 13,907.7 հազ. դրամով պակաս: «Աբի» ՍՊԸ հետ կնքված 34,731.0 հազ. դրամի պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 23,481.0 հազ. դրամի տարբեր տեսակի հանդերձանք, սակայն ընկերության կողմից մատակարարվել է 2,730.0 հազ. դրամի հանդերձանք, կամ 20,751.0 հազ. դրամով պակաս: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա է հաշվարկել պայմանագրերով սահմանված ուշացված օրերի տույժ:

- ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը գնման ընթացակարգի արդյունքում սննդամթերքի գնման համար 2020 թվականի դեկտեմբերի 30-ին կնքել է պայմանագրեր 14 մատակարար կազմակերպությունների հետ: Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Սիսիանի Հաց» ՍՊԸ հետ կնքված 19,600.0 հազ. դրամի պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 3,080.0 հազ. դրամի կարտոֆիլ, սակայն ընկերության կողմից մատակարարվել է 1,470.0 հազ. դրամի կարտոֆիլ, կամ 1,610.0 հազ. դրամով պակաս: «Ցիկլոիդ» ՍՊԸ հետ կնքված 17,650.0 հազ. դրամի պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 11,575.0 հազ. դրամի տարբեր տեսակի սննդամթերք, սակայն ընկերության կողմից չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 11,120.0 հազ. դրամ արժեքով 4000 կգ կարագը: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա է հաշվարկել պայմանագրերով սահմանված ուշացված օրերի տույժ:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2021 թվականի վեց ամիսների համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի ճշտված պլանով նախատեսվել է 17,166,715.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 14,349,893.6 հազ. դրամ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2021 թվականի վեց ամիսների ֆինանսավորումը պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրով

հազ. դրամ

Ծրագրային միջոցառում	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում	10,453,263.4	10,043,708.0	9,937,471.3	9,423,526.3
Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում	13,396.6	8,862.6	8,862.6	10,426.6
ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ	1,000.0	-	-	-
Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր	4,259,678.0	4,259,678.0	4,259,678.0	4,259,678.0
Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավում	2,027,500.0	7,499.4	7,499.4	-
Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում	231,877.6	30,145.6	30,145.6	30,145.6
Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում	180,000.0	-	-	-
Ընդամենը	17,166,715.6	14,349,893.6	14,243,656.9	13,723,776.5

«Ազգային անվտանգություն» ծրագրով 2021 թվականի վեց ամիսների ֆինանսավորումը կազմել է ճշտված պլանի 83.6 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է 14,243,656.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 83.0 %-ը: Ծրագրի միջոցառումների համար նախատեսվել են արդյունքի (կատարողական) ութ չափորոշիչներ՝ ձեռք բերվող դեղերի անվանատեսակ, քանակ, համակարգչային

սարքավորումների քանակ, գրասենյակային գույքի միավոր քանակ և ծառայության ժամկետ, այլ սարքավորումների քանակ, նախագծահետազոտական փաստաթղթերի թիվ, կառուցվող շերքերի ընդհանուր մակերես, տրանսպորտային սարքավորումների քանակ: Ծրագրի միջոցառումները յոթն են.

- «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 10,453,263.4 հազ.դրամ, ֆինանսավորումը կազմել է 10,043,708.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.1 %-ը, դրամարկղային ծախսը՝ 9,937,471.3 հազ. դրամ կամ ճշտված պլանի 95.1 %-ը:
- «Ազգային անվտանգության համակարգի ստորաբաժանումների համար դեղորայքի ձեռքբերում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 13,396.6 հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 8,862.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 66.2 %-ը: Միջոցառման իրականացման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ կնքել է թվով 38 պայմանագրեր՝ 18,713.0 հազ. դրամ ընդհանուր արժեքով:
- «ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկման ծառայություններ» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,000.0 հազ.դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման իրականացման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ հետ կնքել է թիվ 11/23-2021 պայմանագիր՝ 14,000.0 հազ. դրամ արժեքով:
- «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է

4,259,678.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100.0 %-ով:

- «Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,027,500.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 7,499.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 0.4 %-ը: Միջոցառման իրականացման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը նախագծահետազոտական փաստաթղթերի կազմման համար «Տրանսնախագիծ» ՓԲԸ հետ կնքել է պայմանագիր 24,997.9 հազ. դրամ արժեքով:
- «Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 231,877.6 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 30,145.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 13.0 %-ը: Միջոցառման իրականացման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ կնքել է թվով 17 պայմանագրեր՝ 44,499.6 հազ. դրամ ընդհանուր արժեքով:
- «Ազգային անվտանգության համակարգի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման կատարման համար 2021 թվականի վեց ամիսների ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 180,000.0 հազ. դրամ, ֆինանսավորում և դրամարկղային ծախս չի կատարվել: Միջոցառման շրջանակում ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ավտոմեքենաների գնման համար «Կարկոմավտո» ՍՊԸ հետ կնքել է պայմանագիր 15,120.0 հազ. դրամ արժեքով:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում

հանդերձանքի գնման համար 2021 թվականի փետրվարի 5-ին կնքել է պայմանագրեր երեք մատակարար կազմակերպությունների հետ:

2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ «ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «Լենտեքս» ՍՊԸ ամբողջությամբ մատակարարել են համապատասխանաբար՝ 52,853.8 հազ. դրամի և 9,120.0 հազ. դրամի պայմանագրով նախատեսված հանդերձանքը: «Մանանկ» ՍՊԸ հետ կնքված 52,919.1 հազ. դրամ պայմանագրի շրջանակում գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսված էր մատակարարել 31,989.2 հազ. դրամի հանդերձանք: Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Մանանկ» ՍՊԸ կողմից այդ ժամանակահատվածում մատակարարվել է 14,015.3 հազ. դրամի հանդերձանք, կամ նախատեսվածից 17,973.9 հազ. դրամով պակաս: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա է հաշվարկել պայմանագրով սահմանված ուշացված օրերի տույժ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում հանդերձանքի գնման համար 2021 թվականի ապրիլի 2-ին կնքել է պայմանագրեր 14 մատակարար կազմակերպությունների հետ: Հաշվեքննությամբ պարզվել է.

- ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ միջև կնքված 27,979.7 հազ. դրամի թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/5 պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 25,939.7 հազ. դրամի տարբեր տեսակի հանդերձանք: Այդ ժամանակահատվածում ընկերության կողմից մատակարարվել է 12,032.0 հազ. դրամի հանդերձանք, կամ 13,907.7 հազ. դրամով պակաս: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա է հաշվարկել պայմանագրով սահմանված ուշացված օրերի տույժ:
- ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Աբի» ՍՊԸ միջև կնքված 34,731.0 հազ. դրամի թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/8 պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 23,481.0 հազ. դրամի տարբեր տեսակի

հանդերձանք: Այդ ժամանակահատվածում ընկերության կողմից մատակարարվել է 2,730.0 հազ. դրամի հանդերձանք, կամ 20,751.0 հազ. դրամով պակաս: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա է հաշվարկել պայմանագրով սահմանված ուշացված օրերի տույժ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում սննդամթերքի գնման համար 2020 թվականի դեկտեմբերի 30-ին կնքել է պայմանագրեր 14 մատակարար կազմակերպությունների հետ: Հաշվեքննությամբ պարզվել է.

- ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Սիսիանի Հաց» ՍՊԸ միջև կնքված 19,600.0 հազ. դրամի թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ/3 պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 3,080.0 հազ. դրամի կարտոֆիլ: Այդ ժամանակահատվածում ընկերության կողմից մատակարարվել է 1,470.0 հազ. դրամի կարտոֆիլ, կամ 1,610.0 հազ. դրամով պակաս: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա է հաշվարկել պայմանագրով սահմանված ուշացված օրերի տույժ:
- ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Ցիկլոիդ» ՍՊԸ միջև կնքված 17,650.0 հազ. դրամի թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ/9 պայմանագրի գնման ժամանակացույցով մինչև 2021 թվականի հունիսի 30-ը նախատեսվել էր մատակարարել 11,575.0 հազ. դրամի տարբեր տեսակի սննդամթերք: Այդ ժամանակահատվածում ընկերության կողմից չի մատակարարվել գնման ժամանակացույցով նախատեսված 11,120.0 հազ. դրամ արժեքով 4000 կգ կարագը: Հետևաբար, 2021 թվականի վեց ամիսների ավարտից հետո ենթակա է հաշվարկել պայմանագրով սահմանված ուշացված օրերի տույժ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված

մեթոդական ցուցումներով ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2021 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթը ապահովելու համար հաշվեքննությամբ ընդգրկվել են պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը՝

1. «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր:
2. «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման կատարման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կնքված 36 պայմանագրերով 2021 թվականի առաջին կիսամյակում կատարված ծախսեր՝ 558,101.8 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» բյուջետային ծրագրային միջոցառումով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 73 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ազգային անվտանգության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	0	1
Ավագ խումբ	12	12
Միջին խումբ	23	23
Կրտսեր խումբ	31	31
Պայմանագրային զինծառայողներ	2	2
Զինվորական կոչում չունեցող	4	4
Ընդամենը	72	73

Ընտրված աշխատողների հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների աշխատավարձերի և պարգևատրումների ցուցակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բոլոր ընտրված աշխատողների աշխատավարձերը և պարգևատրումները հաշվարկվել և վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան:

2021 թվականի ՀՀ պետական բյուջեի «Ազգային անվտանգություն» ծրագրի կատարման համար հունիսի 30-ի դրությամբ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը կնքել է թվով 297 պայմանագրեր՝ 2,667,109.5 հազ. դրամի: Հաշվեքննության ենթարկված ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից «Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում» միջոցառման կատարման համար կնքված պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ազգային անվտանգության ծառայության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Առաջին կիսամյակի վճարում
Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպում			
ՀայՌուսգազարդ ՓԲԸ	11/251-2013	220,050.0	153,000.0
ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԲՄԱՊՁԲ-21/1-ՎԱՌԵԼԻՔ/1	409,500.0	204,750.0
ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/1	52,853.8	52,853.8

Լենտեքս ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2	9,120.0	9,120.0
Մանանկ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/3	52,919.1	14,015.3
Կոտայքկոշ ԲԲԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/1	3,400.8	3,400.8
Երևանի Ոսկերչական գործարան-1 ԳՆՈՄՈՆ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/2	1,152.0	1,152.0
ԱՆԻ ՏԵՔՍՏԻԼ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/3	2,120.0	2,120.0
Ա/Ձ Մարգարիտ Պետրոսյան Գևորգի	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/4	220.0	220.0
Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/5	27,979.7	12,032.1
Գիլոյան Եղբայրներ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/7	4,950.0	4,950.0
ԱԲԻ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/8	34,731.0	4,350.0
Մանանկ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/11	5,728.8	436.9
Վանգակ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/12	9,356.1	1,061.6
ՌԱԼՅՖ ԳՐՈՒՊ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/13	1,832.0	1,832.0
ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԲՄԾՁԲ-21/1/1	118,118.0	63,112.0
ՆՈՐԲ-7 ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/1	4,419.6	1,285.2
Սիսիանի Հաց ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/3	19,600.0	1,470.0
Ֆ/ա Բ. Մ.	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/4	9,191.0	897.0
Ա/Ձ Գևորգ Գևորգյան Ալեքսանի	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/6	12,800.0	560.0
Բայազետ 1 ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/7	42,687.5	2,687.5
Ֆոտոն ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/8	11,145.0	3,107.2
Ցիկլոիդ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/9	17,650.0	880.0
Սավա ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/10	7,135.0	3,268.9
ԼԵԲՐՈՆ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/12	4,466.7	774.1
Ավանի աղի կոմբինատ ՓԲԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/13	378.0	378.0
ՀԱԴՐՈՒԹ 1 ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/14	13,800.0	2,887.7
ՍԻՍԱԿԱՆԻ ՀԱՍԿ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/1	19,375.2	4,384.8
ԷԼԻՏ ՊՐՈԴ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/2	8,350.0	3,657.3
ԲԻԷՖԲԻ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/1	2,736.6	1,120.8
ԼԵԲՐՈՆ ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/3	1,764.0	882.0
Դանինի ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/5	591.4	105.0
Սավա ՍՊԸ	ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՄՆՆԴԱՄԹԵՐՔ/7	1,350.0	1,350.0
Ընդամենը		1,131,471.1	558,101.8

ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ միջև 2013 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 11/251-2013 պայմանագրի շրջանակում 2021 թվականին կնքված համաձայնագրով բնական գազի մատակարարման համար նախատեսվել է 220,050.0 հազ. դրամ: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2020 թվականի դեկտեմբեր, 2021 թվականի հունվար, փետրվար, մարտ, ապրիլ և մայիս ամիսներին մատակարարված բնական գազի համար դուրս գրված հաշիվ ապրանքագրերի հիման վրա վճարել է ընկերությանը գումարային 153,000.0 հազ. դրամ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 2021 թվականի կարիքների համար «ՍիՓիԷս Օիլ» ՍՊԸ հետ 2020 թվականի դեկտեմբերի 18-ին բենզին և դիզելային վառելիք գնելու համար կնքել է պայմանագիր՝ 409,500.0 հազ. դրամ արժեքով: Պայմանագրով նախատեսվել է ձեռք բերել 1200000 լ ռեգուլյար

տեսակի բենզին, մեկ լիտրը՝ 284 դրամով և 300000 լ դիզելային վառելիք, մեկ լիտրը՝ 229 դրամով: 2021 թվականի առաջին կիսամյակում պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան մատակարարվել է 600000 լ ռեգուլյար տեսակի բենզին և 150000 լ դիզելային վառելիք, որի դիմաց ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը վճարել է ընկերությանը 204,750.0 հազ. դրամ:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում սննդամթերքի գնման համար 2021 թվականի մարտի 30-ին կնքել է պայմանագրեր երկու մատակարար կազմակերպությունների հետ: Կնքված պայմանագրերի շրջանակներում սննդամթերքի մատակարարումները իրականացվել են գնման ժամանակացույցերին համապատասխան:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/3-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում սննդամթերքի գնման համար 2021 թվականի մարտի 30-ին կնքել է պայմանագրեր 7 մատակարար կազմակերպությունների հետ: Կնքված պայմանագրերի շրջանակներում սննդամթերքի մատակարարումները իրականացվել են գնման ժամանակացույցերին համապատասխան:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 120,000.0 հազ. դրամ նախահաշվային գնով սննդի պատրաստման ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպել է ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգ: Մրցույթի միակ մասնակից է հանդիսացել շրջանառության հարկով աշխատող «ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ» ՍՊԸ, որը ներկայացրել է գնային առաջարկ՝ 119,919.8 հազ. դրամ առանց ԱԱՀ: Իրականացված բանակցությունների արդյունքում մասնակցի առաջարկված գինը նվազեցվել է մինչև 118,118.0 հազ. դրամ, և 2021 թվականի մարտի 31-ին «ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ» ՍՊԸ հետ կնքվել է թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԲՄԾՁԲ-21/1/1 պայմանագիր:

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված 2021 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների ցուցանիշները

համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finance և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, տարբերություններ չեն արձանագրվել:

Հաշվեքննության ընթացքում խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, հայտնաբերվել են անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն:

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացվում են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություն

հազ. դրամ

Անհամապատասխանություն	Իրավական ակտ	Գումար
Գնման ժամանակացույցով նախատեսվածից պակաս մատակարարված ապրանք	«Մանանկ» ՍՊԸ, թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/3 պայմանագիր	17,973.9
Գնման ժամանակացույցով նախատեսվածից պակաս մատակարարված ապրանք	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ, թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/5 պայմանագիր	13,907.7
Գնման ժամանակացույցով նախատեսվածից պակաս մատակարարված ապրանք	«Աբի» ՍՊԸ, թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԳՀԱՊՁԲ-21/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/8 պայմանագիր	20,751.0
Գնման ժամանակացույցով նախատեսվածից պակաս մատակարարված ապրանք	«Սիսիանի Հաց» ՍՊԸ, թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԳՀԱՊՁԲ-21/2- ՍՆՆԴԱՄԹԵՐՔ/3 պայմանագիր	1,610.0
Գնման ժամանակացույցով նախատեսվածից պակաս մատակարարված ապրանք	«Ցիկլոիդ» ՍՊԸ, թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԳՀԱՊՁԲ-21/2- ՍՆՆԴԱՄԹԵՐՔ/9 պայմանագիր	11,120.0

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ չունի:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների, խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
Դավիթ Չիբուխչյան